

Հ. Ճ. ԱՐԵՎՈՒՆԻ

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. ԱՐԱՄ Մ. ՖՐԵՆԿՅԱՆ (1898—1964)

Արամ Ֆրենկյանն ալ կորսնցուցինք, մեկը ևս մեր մտքի մարդոց արժեքավոր այն խումբեն, որ իր աշքերը բացավ ոռումեն երկնքի տակ, և իր բովանդակ կյանքը ի սպաս դրավ զինք հույրընկալող հողին:

Ան ծնած էր 1898-ին Կոնստանցայի մեջ, իսկ իր ծնողները կեսարացի էին: Զարվեցավ իրեն հայեցի լուրջ կրթություն մը ստանալ այն օրվան պայմաններուն տակ, ու հետագային ալ օտար միջավայրի մեջ էր, որ հասակ նետեց—ճակատագիր, որ օտար հողերու վրա նետված հայ սերմերեն շատերուն եղավ:

Արամ Ֆրենկյան իր նախնական ուսումը ստացավ Կոնստանցայի գերմանական դպրոցը, ու զայն շարունակեց ապա Բուքրեց, Լիչենով Լազարի մեջ: Անկե անցավ Զերնեուց, գրականության և փիլիսոփայության ֆակուլտեն, որը ավարտեց 1926-ին:

Իր բարձրագույն կրթությունը ան հետո շարունակեց Փարիզ, Սորբոնի մեջ, 1926—1929 տարիներուն, հետևելով Ecole des hautes études-ի և Ecole normale supérieure-ի դասընթացքներուն, ուր իր պրոֆեսոր ունեցած էր օրվան մեծագույն հեղինակությունները, որպիսիներն էին Լեոն Ռոբին, Էմիլ Բուրգես, Էմիլ Բուրգես, Մասոն Ռուսել, Ալֆրեդ Ֆուչե և Լուի Ֆինո:

Հետևած էր փիլիսոփայության, և մասնավորաբար հելլենականին: Ռումանիա վերադարձն ետք էր, որ, 1931-ին, ստացավ փիլիսոփայության դոկտորի տիտղոս, և նվիրվեցավ մանկավարժական ու գիտական գործունեության: իսկ 1937-ին արդեն առընթերակա (ասիստենտ) էր Զերնեուցի համալսարանին գրականության և փիլիսոփայության ֆակուլտետին մեջ՝ հույն լեզվի և գրականության:



Բյան ամբիոնին առընթեր: Նույն պաշտոնով Բուքրեց փոխադրված 1940-ին, հինգ տարի հետո, 1945-ին, վերջնականապես կոնֆերանսին կանվանվեր հույն լեզվի և գրականության, ինչպես և հելլենական փիլիսոփայության և գիտությանց Բուքրեցի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետին մեջ, ավելի հետո ստանալու համար պրոֆեսորի կոչում:

Պրոֆ. Արամ Ֆրենկյան տեղյակ էր եվրոպական բազմաթիվ լեզուներու Ան Հավասարապես կգրեր ուսմաներեն, ֆրանսերեն և գերմաներեն. ծանոթ էր նաև անգլիերենների և իտալերենի, ու կխոսեր հայերեն ու թուրքերեն ալ. Բայց հոնարենն էր իր նախասիրածը բոլոր այդ լեզուներեն, ինչպես որ Հելենական ուսումները պիտի կազմեին իր գիտական մտահոգությանց դաշտը: Խսկ Հելենական ուսումներեն հույն փիլիսոփայությունն էր, որ զայն պիտի առինքներ առավելապես, թեև հետագային պիտի շահագրգովեր նաև մաթեմատիկայով՝ իր պրատումները միշտճելով այդ մարզեն ալ ներս:

Հելենական ուսմանց նվիրված իր առաջին երկը, որ 1932-ին տպագած է, փորձ մըն է Պղատոնի և Արիստոտելի էստետիկան ուսումնասիրելու: Այդ երկով է, որ ան մուտք գործեց Հելենաբաններու շարքը, ուր տակավ Հեղինակություն մը պիտի դառնար: Իր հետագա պրատումները ան նվիրեց նախասոկրատյան փիլիսոփայության ուսումնասիրությանց, և այդ մասին լուս ընծայեց երկու աշխատություններ, 1933-ին⁴ և 1937-ին⁵, թաղդատական փիլիսոփայության փորձեր էին այս աշխատությունները, որոնք պիտի գային իր անունը այլև նվիրագործելու այս բնագավառին մեջ:

Արամ Ֆրենկյան Հոմերոսի հետ կապված նյութեր ձեռք առավ հետո, 1934-ին⁶ և 1935-ին⁷ տպագրության հանձնելով երկու ուրիշ գործեր, որոնք արձագանք պիտի գտնեին դասական գրականության նվիրված մամուկին մեջ և պիտի արժանանային ֆրանսացի և իտալացի երկու գիտնականներու ժողով Սովիլճի և Մ. Ֆ. Ֆիակայի բացառիկ գնահատանքին, անգամ մը ևս շեշտելով անոր հեղինակությունը Հելենական ուսմանց մեջ:

Այդ աշխատանքներում պիտի հաջորդեին նաև ուրիշներ՝ Հելեն միտքը պրատելու համար ուրիշ մարդիրու վրա ևս: Այդ կարգի աշխատանքներ ան նվիրեց հոնական իրապաշ-

տությանը, Պարմենիդի⁸, Եվլիփեսի⁹, Պղատոնի¹⁰, Պարմենիդի և Պլոտինի¹¹, հին հունական աստվածներու նախանձին¹², «Որդի Մարդու» բացատրության¹³, ինչպես և Սոկրատի¹⁴, աշխատանքներ, որոնց մեջ հմտությունն ու գիտական խօնմտությունը կընթանային համընթաց:

Արդի փիլիսոփայության հետ կապված հարցեր ևս շահագրգուեցին զայն միևնույն ժամանակ, որպիսին էրն Ֆրուդենի¹⁵ և Բերգսոնի¹⁶ տեսությունները և հարաբերական տիեզերածնությունը:

Հելենական մտքով որևէ զբաղող շէր կրնար իր պրատումները շտարածել նաև հունական աշխարհեն դուրս, զննելու առթիվ այդ մտքին առնչությունը նաև ուրիշ ժողովուրդներու մտածման հետ: Ֆրենկյան իր ուսումնասիրությանց դաշտին մեջ մտցուց առաջին հերթին եղիպտոսը իր փիլիսոփայական ըմբռումներով, մտահոգությունն, որ զինք պիտի մզեր ծանթանալու եղիպտական լեզվին ալ: Այս առթիվ էր, որ ան ուզեց սկիզբը զնել ուսումնասիրությանց շարքի մը՝ պրատելու համար Արևելքի ազգեցությունը եվրոպական մտքին մեջ ծագում առնող ենթակայական իդեալիզմի վրա, և այս շարքին իր առաջին հրատարակությունը եղավ իր աշխատությունը Մեծիսի աստվածաբանական վարդապետության մասին¹⁷:

Պրոֆ. Ֆրենկյան կանգ շառավ եղիպտոսի մեջ: Հելենական միտքը զայն կտաներ ավելի հեռուները: Ան սկսավ պարապիլ Հելեն, իրանական և հնդիկ մտածմանց փոխադարձ

⁶ „Le réalisme grec“. Cernăuți, 1939.

⁷ „Parménide precursor al teologiei negative“. Cernăuți, 1939.

⁸ „Le postulat chez Euclide et chez les modernes“. Paris, 1940.

⁹ „Le méthode hippocratique dans le „Phèdre“ de Platon“. Bucarest, 1941.

¹⁰ „Les origines de la théologie négative de Parménide à Plotin“. Bucarest, 1943.

¹¹ „Gelozia zeilor la Vechii Greci“. București, 1945.

¹² „Ο Υιος Τογ „ΑΝΘΡΩΠΤΤΟΥ“, Bucarest, 1947.

¹³ „Dece a fost condamnat Socrate?“. București, 1942.

¹⁴ „Antichitatea și Freudismul“. Cernăuți, 1938.

¹⁵ „Libertatea și determinismul la Bergson față de știință modernă“. Cernăuți, 1938.

¹⁶ „Complementaritatea psihico-fizică. Încercare de cosmogonie relativistă“. București, 1942.

¹⁷ „L'Orient et les origines de l'idéalisme subjectif dans la pensée européenne“. Tome I. „La doctrine théologique de Memphis. (L'inscription du roi Shabaka“). Paris, 1946.

¹ „Mimesis și muzică. O contribuție la estetica lui Platon și Aristotel“ Cernăuți, 1932.

² „Etudes de philosophie présocratique. I. Héraclite d'Ephèse“. Cernăuți, 1933.

³ „Etudes de philosophie présocratique. II. La philosophie comparée—Empédocle d'Agrigente—Parménide d'Elée.. Paris, 1937.

⁴ „Le monde homérique. Essai de protophilosophie grecque“. Paris, 1934.

⁵ „Le problème homérique. Considérations sur l'origine des épopees homériques“. Paris, 1935..

կապերով¹⁸; Այդ առթիվ էր, որ ան զննեց Հոմական սկսատիկությունն ու իր կապը Հնդկական փիլիսոփայության հետ¹⁹, «քունի տեսությունը» ըստ Ուպանիշացի և Ցողայի²⁰, և Հովհաննու Հայտնության մեջ «երկրորդ մաճ» և Պունուրմարտիկուն²¹; Հունական և Հնդկական փիլիսոփայության կապերուն մասին Ֆրենկլյան ելույթ ունեցավ նաև դասիսությանց և զեկուցումներու մեջ:

Հնդկաստանին դառնալով Մերձավոր Արևելք, ուր հելենական միտքը ավելի խոր թափանցած էր, Ֆրենկլյան զննեց Գիլգամեշի դյուցազներգության կապը հույն ստեղծագործությանց հետ, այդ դյուցազներգությամբ զբաղելով երկիցս, 1960-ին²² և 1962-ին²³:

Արենելիք մեջ հելեն ազգեցություններ որոնած ատեն՝ Ֆրենկլյան վեց սակայն մայր հողը, այսինքն Ելլադան իր հարազատ մտածողներով; Ան 1951-ին թարգմանաբար Հրատարակեր էր Հատընտիր էշեր Արիստոտելեն: Ավելի հետո ան պրատեց Ելլիպիդեսի ըմբռնումը աստվածներու մասին²⁴ և մարդկային տառապանքի ըմբռնումը Սոփոկլեսի ողբերգությանց մեջ²⁵, գրաղելով միենույն ատեն գաղափարանիշերով և որոշելներով²⁶, և լույս ընծայելով հույն գրականության պատմության դասական շրջանի մասին իր դասրնթացը²⁷:

Երկար տարիներու իր ուսումնասիրությանց առարկա ըրած էր նույնապես Գարու (մ.թ.) հույն փիլիսոփա Դիոգինես Լաերտուսի տասնհատորյա երկը մեծ փիլիսոփաներու կյանքին և վարդապետությանց մասին, և բացի նույն փիլիսոփային վրա

¹⁸ „Purusa-Gayōmard, 'Ανθρωπος. Quelques problèmes concernant la communauté indo-iranienne et la Grèce antique“. Bucureşti, 1943.

¹⁹ „Scepticismul grec și filosofia indiană“. Bucureşti, 1957.

²⁰ „La théorie du sommeil, d'après les Upaniṣads et le Yoda“. Bucarest, 1957.

²¹ „Punarmṛtyu et la „seconde mort“ dans l'Apocalypse de Saint Jean“. Bucureşti, 1943.

²² „L'épopée de Gilgamesh et les poèmes homériques“. Bucureşti, 1950.

²³ „Observations sur l'origine et la composition de l'épopée de Gilgamesh“. Bucureşti, 1962.

²⁴ „Concepția despre zei a lui Euripide“. Bucureşti, 1956.

²⁵ „Înțelesul suferinței umane în tragediile lui Sofocle“. Bucureşti, 1961.

²⁶ „Idiogramele și determinantele în litarul B...“. Bucureşti, 1960.

²⁷ „Curs de istoria literaturii grecești. Epoca clasică (sec. V—IV, în. e. n.)“ Bucureşti, 1962.

Հակիրճ աշխատութենե մը²⁸, վերջերս գրեց նաև ներածական ուսումնասիրություն մը անոր այդ պատկառելի աշխատության ուղարկերեն թարգմանության սկիզբը²⁹:

Չենք կրնար չիշել նույնպես իր ուսումնասիրությունները մաթեմատիկայի հետ կապված հարցերու մասին՝ անոնց սերտ առնչությանը պատճառով բուն փիլիսոփայության հետ: Այդ մարդին վրա ևս Ֆրենկլյան երեք հրատարակություններ ունի:

Մաթեմատիկայի նվիրված իր երկերուն մեջ կարեռագույնն է իր ուսումնասիրությունը սումերո-ակկադյան, եգիպտական և Հունական մաթեմատիկուններու մասին, ուսումնասիրություն, զոր ֆրանսերեն լույս ընծայեց երեք մասերով³⁰, և որ իր ոսումներն հրատարակությունն ալ ունեցավ:

Ֆրենկլյան պարապեցավ նաև Հունական տեքստերու թարգմանությամբ: Ինն են, օրինակ, պրոֆ. Յոն Բանուի հույն մատերիալիստներու նվիրված երկին³¹ և պրոֆ. Գուլիսինի Արիստոտելի մասին ուսումնասիրության³² մեջ ներմուծված տեքստերու թարգմանությունները: Ավելորդ է ըսել, թե Հունական տեքստերի թարգմանություններ ունի նաև իր զանազան ուսումնասիրությանց մեջ:

Պրոֆ. Ֆրենկլյան փնտոված աշխատակից մը եղավ հելենարանությամբ, փիլիսոփայությամբ և Արևելքով զբաղող բազմաթիվ հանդեսներու համար: Բացի Ռումանիու մեջ լույս տեսնող պարբերականներե, որպիսին էին Զերնեուց տպագող կարգ մը հանդիսներ, ինչպես «Glasul Bucovinei», «Fat Frumos», «Buletinul facultății de Științe» և «Codrul Cosminului», «șerșni կաշատակիցեր Զերնեուց գտնված ատեն, և Բուլղել հաստատվելե հետո իր աշխատակցած մայրաքաղաքի մասնագիտական պարբերականներ, ինչպես «Revue des études indoeuropéennes», «Revista clasică», «Studia et acta orientalia», «Studii de literatura universală», «Limba română», անոր աշխատակցությունը փնտուցին նաև իտալական «Maia», «Helikon», ինչպես նաև «Acta logica հանդեսները»:

²⁸ „Analecta Laertea“. Bucureşti, 1961.

²⁹ „Diogenes Laertios: Despre viețile și doctrinele filosofilor. Trad. C. I. Balmuș. Studiu introductiv și comentaril de prof. Aram M. Frenkian“ Bucureşti, 1963.

³⁰ „Recherches de mathématiques suméro-akkadiennes, égyptiennes et grecques“. Bucureşti, I-II, 1957, III, 1958.

³¹ „Primi materialiști greci“. Bucureşti, 1950.

³² „Aristotel“, Bucureşti, 1951.

Արամ Ֆրենկյան իր աշխատության սեղանը թողոց՝ երբ գեռ այնքան թարմ էր մտքով և ստեղծագործելու իր տրամադրությամբ: Իր դարակներուն մեջ հերթի կապասեին արդեն ավարտած այնքան գործեր, և շատ ուրիշներ, որոնք մշակվելու վրա էին դեռ:

Իր ավարտած երկերեն ոմանք ծավալուն մենագրություններ են, ինչպես «Heracleitos din Efesos», «Sextus Empiricus», «Plotin et l'Orient», «L'enseignement oral dans L'école de Plotin», «Les doxographies et les fragments des Uilésiens», «Istoria logicei», «Filosofia greacâ în sec. VI în. e. n.».



Արամ Ֆրենկյան մեկն եղավ Արևելքով զբաղող այն խումբ մը մտավորականներեն, որոնք 1957-ին նախաձեռնեցին արևելյան ճյուղի մը կազմությունը պատմական և բանասիրական ուսումնասիրությանց ընկերության կողքին: Մաս կկազմեր, այդ թվականին ի վեր, նույն ճյուղին վարիչ կոմիտեին, ինչպես և «*Studia et acta*»-ի խմբագրական մարմնին, և իր դասախոսություններով ու հոգածներով իր մասնակցությունը կրերեր ըլլա՝ մեր հրապարակային նիստերուն, ըլլա՝ մեր տարեգիրքին:

Բայց ինչ որ կուզեի այստեղ նշել, այն հեղինակությունն էր, զոր իր անունը կրերեր ուսմեն արևելագետներու սույն խմբակցության: Ես մոտեն գիտեմ, որ խմբակցության կազմության առթիվ ուսմեն գիտական բարձրագույն շրջանակներու ցույց տված բարյացակամության մեջ մեծ դեր կատարեղ իր ներկայությունը հիմնադիրներու շարքին, ներկայություն, որ կոչված էր վարկ ապահովելու մեզ ոչ միայն երկրին մեջ, այլ նաև հաշուարտասահմանի, ուր իր ուսումնասիրություններով ժանոթ անուն մըն էր ինքը վաղուց:

Մեր խմբակցությունը ենթաճյուղերու վերածված ատեն, իրեն բաժին ինկավայն անձնակազմը, որ կզբաղեր եղիտափական և հնդկական ուսումներով՝ Փանից զգացուցած է ինձ, թե դժբախտ կսեպէ ինքինքը մաս չկարենալ առնելուն համար հայկական ուսմանց զույգ ենթաճյուղերուն, զորս կգլխավորեինք Իրնըցեանուն և ես, և ըստած միենուն ատեն, թե պիտի աշխատի ինք ևս միանալ մեզ օր մը:

Սրտին մեծ ցավ էր, որ թափանցել չէր կրցած հայ ժողովուրդի հոգեկան գանձին, Անկարող հայ հեղինակները ճանշնալու իրենց բնագրին մեջ, անոնց մասին առավելապես օտար աղբյուրներե միայն լուր ուներ: Կապը, զոր երևանի գիտական շրջա-

նակները իրեն հետ ստեղծեցին վերցին տարիներուն, խթան մը եղավ, որպեսզի ծանոթանալ փորձե զասական հայերենին՝ հայ հին մատենագրության մեջ որոնելու համար փիլիսոփայական մսածումը, և մասնավորապես պրապտերու համար հունական իմաստասիրության թողած հետքերը հայ փիլիսոփայական մտքին վրա: Ան տարակուսա շուներ, որ հելլենական զաղագարները մեծ շափով ազդած են հայ մտքի որոնումներւն վրա, և հիացմունքով կանդրադառնար հաճախ այն մեծ ծավալին, զոր գտած էին հուն փիլիսոփաներե կատարված թարգմանությունները հայ մատենագրության մեջ: Զայն կզարմացներ մանավանդ ստվար թիվը հայերեն ձեռագիրներուն, որոնք հասած էին մեզ Արիստոտելե և ուրիշ հուն փիլիսոփաներե կատարված թարգմանություններն: Իրեն համար փոքր անակնկալ մը չէր հայ ձեռագիրներուն մեջ հայտնությունը թարգմանության մը, կատարված Զենոն հուն փիլիսոփային ցարդ կորսված կարծվող մեկ երկին, ձեռագիր, զոր լուն Խաչիկյան երևան հանած էր 1949-ին Երևանի Մատենադարանին մեջ և տպագրած: 1956-ին Ս. Արեգատյան հրատարակած է անոր ոստաբերն թարգմանությունը: Ֆրենկյան ուշի-ուշով պրապտեր հրատարակության տրված այդ տեքստը և սակայն համարձակություն շտվավ իրեն հայտնաբերված այդ երկը վճռական կերպով վերագրելու համար Զենոնին՝ այն տարբերությանց պատճառով, զորս կգտներ Մատենադարանի մեզ պահվող թարգմանության և առհասարակ Զենոնը հատկանշող մտքերուն միջնորդ գույքը:

Փոխարեն, ան գրախոսական մը նվիրեց գերման գիտնականի մը՝ էպոսա Գոմիտեր Շմիտի կատարած ուսումնասիրության Զենոնի վերագրված այդ երկին մասին³³, գրախոսական, որ լուս պիտի տեսնե «*Studia et acta orientalia*»-ի հառաջիկա հատորին մեջ, և ուր Ֆրենկյան, քննադատելով հանդերձ գերման հեղինակին ինչ-ինչ տեսակետները խնդրու առարկա ձեռագրին մասին, իր իսկ տեսությունները կպարզ այդ առթիվ: Ֆրենկյան ևս, Շմիտի նման, հեռու է համաձայն ըլլալե Խաչիկյանի և Արեգատյանի հետ՝ Մատենադարանի մեջ հայտնաբերված ձեռագիրը ստոյիկյան դպրոցի հիմնադիր Զենոնին վերագրելու համար, կասկած, զոր հայտնած էին նաև իրենցմե առաջ Մաքս Պոլիեն (1955) և Հ. Դորրի (1957), հակառակ որ հայերեն ձեռագրին մեջ փիլիսոփայական նույն դպրոցին տարբերու կարելի էր հանդիպիլ պատահական կերպով, բան մը, որ շատ բնական էր համախառնության (syncretisme) այն

³³ «*Studia et acta orientalia*», V (1965).

գարուն մեջ, երբ շարագրված պետք է ըլլա հայերեն երկը: Ֆրենկյան կկարծե նույնիսկ, որ այս վերջինը ներշնչված է նոր-պղատունական մեկնաբաններե, որպիսիներն էին Պորֆիոր, Ամոնիոս, Միմակիշոս և մասնավորաբար Ողիմափողոր:

Եմիտ վերլուծած ատեն «Հայկական Զենոն»-ին առաջին գլուխը, կդտնե, որ աստղագիտական նյութերը և աստղագիտության հետ կապված թշշկական նկատողությունները, զորս կպարունակի ան, փոխառությունն, կենդանակերպերու նշաններու հետ կապված երկիրներու ցանկը՝ Պողոս Աղեատանդրացիքին, Մանիլիուսեն և Դորոթեեն, և կենդանակերպերու նշաններու կապված մարդկային մարմիններու մասերը՝ Մանիլիուսեն, Սեբատուս էմպիրիկուսեն և Հեփայտուննեն երկիրներու ցանկին մեջ է, որ հայերենը շատ մոտ է Պողոս Աղեատանդրացին, զոր Եմիտ կնկատե անոր աղբյուրը, ինչ որ Ֆրենկյան ինք ևս հավանական կդան³⁴:

Հայերեն ձեռագրին երրորդ գլուխը վերլուծած ատեն Եմիտ զեմ-դիմաց կդնե անոր զանգան մասերը հույն փիլսոփիա Դավիթին հետ, որ Զ դարուն թարգմանված էր արդեն հայերենի, Ֆրենկյան սակայն կավեցնե, թե տարբեր են երկու հեղինակներու ոգին և անոնց շարադրելու կերպը: Եթե կարդանք Ողիմափողոր, Եփիասը և Դավիթը, և նույնիսկ ավելի հին մեկնաբանները (ինչպես Պորֆիյուր, Ամոնիոս, Միմակիշուս, Փիլոպոն), — կըսի Ֆրենկյան, — կտեսնենք, որ Արիստոտելի նոր-պղատունական մեկնաբաններու միևնույն ավանդությունն է, որ կշարունակվի մեկեն մյուսին մոտ, մինչ հայերենին մեջ երբեք այդպես չէ: Քննված նյութերու քառոսին շարակարգությունը հայերենի հեղինակին մոտավոր ընդունակությանց մասին նպաստավոր գաղափար չի տար: Նույնիսկ սիստեմ ունեցող միտք մը չէ: Քննարկած ատեն փիլսոփայության սահմանումները, որոնք Եփիասի և Դավիթի ավանդություններն կուգան, կներմուծ գնուստիկներեն փոխառնակած գաղափարներ:

Ֆրենկյան ինք ևս, Եմիտին հետ մեկտեղ, ամենեն շահճականը կդտնե հայերեն ձեռագրին հինգերորդ գլուխը, թեև այդ շահճեկանությունը իր ամբողջ թափով երևան չի գար՝ շատ խտացած ձեռվ կապությունը իր ամբողջ թափով կար իր ամբողջ թափով կապակած ըլլալով ձեռագրիրը: Ֆրենկյան ձեռագրին ինքնա-

տիպությունը կդտնե նաև այն բանին մեջ, որ քրիստոնյա մըն է զայն շարագրողը, ունենալով աստվածաբանական ինչ-ինչ գաղափարներ, որոնք այլև չեն համապատասխաներ դասական շրջանի հույներու գաղափարներուն: Հավիտենական ծանոթությունը, օրինակ, հայ ձեռագրիր կվերագրե կատարելության արժեքին, մինչ հույն փիլիսոփաները անկատարելության կլիրագրեն զայն: Ֆրենկյան առեղծված կնկատե նույնպես, որ տիտղոսի մը մեջ շարը հիշատակված է բարիեն առաջ, և հարց կուտա, թե մաղդեական երկուության աղեցությունը պետք չէ՝ փնտոել արդյոք հոգ:

Ինչ կվերաբերի դարուն, երբ կրնա խմբագրված ըլլալ «Հայկական Զենոն»-ը, Ֆրենկյան կմոտենա Եմիտի այն տեսակետին, թե անոր շարադրությունը տեղի ունեցած է յոթներորդ դարուն, այսինքն արարական խուժումնեն առաջ դեպի Հայաստան, քանի որ ձեռագրին մեջ կենդանակերպերու նշաններուն կցված երկիրներուն ցանկը արարեներուն հիշատակությունն ալ կընե, մինչ հույն և լատին զուգընթաց ցանկերը արարեներու անունը չեն պարունակեր: Ֆրենկյան կմիտի նույնիսկ հավանական նկատելու Զ դարը, որովհետ կամ Դավիթ, որ աղբյուր ծառայած է հայերենին, կպատկանի այդ դարուն:

Մատենադարանին մեջ հայտնաբերված հայերեն ձեռագրիր Զենոնին շվերագրելով հանդերձ, Ֆրենկյան կրնողունի, որ Լ. Խաչիկյան և Ս. Արևշատյան շնորհակալ գործ մը կատարած են՝ լուս ընծայելով և ոռւսերենի թարգմանելով «Հայկական այս Զենոն»-ը, որ բազմաթիվ և բարդ հարցեր մեջտեղ կդնե:

Ու շմոռնանք հիշել, որ «Հայկական այս Զենոն»-ն էր, որ Ֆրենկյանի առջև հետազոտությանց նոր դաշտ մը պիտի բանար, եթե չկտրվեր հանկարծ իր կյանքին թելլ: Ան կուղեր ու միայն հույն մտքին հետքերը փնտոել հայկական հին մատենագրության մեջ, այլ քննել մանավանդ, թե ինչ ձեւափոխություն կրած է այդ միտքը կիմա փոխած ատեն:

Կերչին տարիներուն նոր կիրք մը տոփորեց զինքը. ուզեց մոտենալ իր ժողովուրդին: Հայ կյանքին հեռու էր ապրեր մինչև այն ատեն, և իրմով շահճարգովողներ ալ չէին եղեր, ապա՞զ, մեզմե: Շատ ուշ էր միայն, որ զիրար զտանք, հայ մտահոգությանց հետողակի կապված հայ մտավորականներս, և տաղանդաշուղը այս մարդը, որ օտար կյանքի մեջ կսպառեր իր հոգեկան ճիգերը և զոր խորթ էինք նկատեր մեզի: Անակնկալը փոխարձ եղավ: Մենք անոր ներսը գտանք հարազատ մը, որուն սիրտը միշտ շերմ մնացեր էր դեպի իր ժողովուրդ՝ առավելապես համակված անոր տառապանքներուն ու

³⁴ Ernst Günther Schmidt, „Die altarmenische „Zenon“—Schrift (Abhandlungen der Deutschen Akademie der Wissenschaften zu Berlin. Klasse für Sprache, Literatur und Kunst“. 1960, №2), Akademie-Verlag, Berlin, 1961, 50 p.

մարտիրոսագոռության սարսուռով, իսկ ինք սկսավ ավելի մոտեն ժանոթանալ հայ ժողովորդի հոգեկան արժեքներուն, և ինքովինք զգալ ավելի հպարտ և հետևաբար ավելի և երշանիկ:

Իր այդ շահագրգությունը չկրցավ լրման հասցնել սակայն: Սեղանին վրա մնաց հայերեն Ավետարանը, ուրկե դասական հայերենը սկսեր էր սորվիլ:

Իր մահը, որ տեղի ունեցավ 1964 նոյեմբեր 10-ին, շշմեցուց մեզ բոլորս: Գիտեինք, որ ան կտառապեր սրտեն թայց չէինք կարծեր, որ մահը այսքան հանկարծակի պիտի խլեր զայն մեզմե՝ իր մտավոր ստեղծագործական ուժերուն բովանդակ լրությանը մեջ, երբ մանավանդ դեռ այնքան կարիք ունեինք մենք անոր: Ան կմեկնի իսկական բաց մը թողուցած ետին, և իր մահը, ինչպես կծանուցանեին գիտական հիմնարկությունները իրենց մահազդին մեջ, ոմեծ կորուստ մըն է ոռումեն դասական բանասիրության համար»:

...Ամեն անգամ, երբ կհանդիպեինք, պարտականություն մը ունեի ես. պետք է քանի մը առած ըսեի իմ գիտցածներես. զանոնք կնոթեր հավաքածոյի մը համար, ուր խտացած պիտի ըլլար Արևելքի իմաստությունը: Վերջին անգամ միայն թերացա պարտականությանս մեջ. իրարու հանդիպեր էինք հայոց եկեղեցվոր մեջ, իր մահեն ճիշտ երկու օր առաջ, ողբացյալ թընթցեանուի հոգեհան-

գիստին: Այդ օրը իրարու ձեռք սեղմեցինք միայն և երր ակնարկս հարց կուտար իրեն, թե ինչպես է առողջությամբ, ինքն ալ ակնարկով մը ինձ կպատասխաներ, թե կփորձեր դիմանալ....

Որո՞ւն մտքեն կանցներ, թե երկու օր շանցած իր սիրառ պիտի դադրեր տրոփելի հանրակառքով ճամբորդած պահում, ճիշտ ու ճիշտ տարի մը հետո դժբախտ վախճանեն թընթցեանուին, որուն նույնպես սիրտը կեցեր էր ինքնաշարժով տուն վերադառնալու տահեն:

...Երկու օր՝ հետո տարինք զայն թաղէլ հայոց գերեզմանատունը, թընթցեանուեն քանի մը գերեզման անդին:

Գերեզմանատունեն ետ դարձանք անհունապես ընկճված, առանց նույնիսկ հաշտվիլ փորձելու մեր կրած հարվածին հետ: Թիշեր միայն կրցած են այնքան կուկիծ ձգել իրենց ետին, ու այնքան գուրգուրանք, գիտուն ու բեղուն, ան սրտով ալ մեծ էր եղեր, սիրով լիցված ամենուն հանդեպ, բայց և սիրված ամենեն: Հեզ ու խոնարհ, բայց միշտ ակնածանք աղղեր էր շուրջը բուրին և իր համեստության մեջ պատկառելի մնացեր էր միշտ ան: Ու հողը մտավ արցունքներով ողողված: Քաջությունը շունեցա իրեն ծոփի, ու փսփսալ ականջին վերջին առած մը, որ շրթունքներուս վրա կղեգերեր այդ պահուն, երբ հողի քանի մը փշրանք կնետեի հեք բարեկամիս վրա.

— Բոլորը սուտ, աս մեկն է իրավ....

